Արդյունքում՝ Դատարանը եզրահանգում է, որ հայցը՝ թիվ «ԱՔ-ԲԿԳԿ-ԷԱՃԾՁԲ-26/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.04.2026թ. թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշումը՝ «Մոնթե կորպորեյշն» ՍՊ ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին, անվավեր ճանաչելու համար բավարար հիմքեր առկա չեն:

Ամփոփելով վերոգրյալը՝ Դատարանը եզրահանգում է, որ հայցն անհիմն է և ենթակա է մերժման:

_

<u>Դատական ծախսերի բաշխման հարցը</u>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101 հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի բաշխման հիմքում դրել է համամասնության սկզբունքը, որը պետք է համապատասխանի բավարարված հայցապահանջին:

Հաշվի առնելով վերոնշյալը և այն հանգամանքը, որ հայցը ենթակա է մերժման, իսկ Հայցվորի կողմից նախապես 1,020,000.00 ՀՀ դրամի չափով վճարվել է պետական տուրքի գումարը, Դատարանը եզրահանգում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191, 192 և 234.12 հոդվածներով, Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«Մոնթե կորպորեյշն» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի՝ թիվ «ԱՔ-ԲԿԳԿ-ԷԱՃԾՁԲ-26/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.04.2026թ. թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշումը՝ «Մոնթե կորպորեյշն» ՍՊ ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին, անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակելու

օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Գրիգորի Վարդանյան**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IE39-58A3-4132-B94B հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am